Գործով հայցվորի կողմից վկայակոչված բոլոր փաստերը դատարանը համարում է հաստատված, որպիսի պայմաններում ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից www.gnumner.am կայքում 25.05.2023թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ որոշումը, 07.06.2023թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ շտկված որոշումը, 13.06.2023թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ շտկված որոշումը ենթակա են անվավեր ճանաչման:

Այսպիսով դատարանը գտնում է, որ հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 14.07.2023թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել՝ մինչև վճռի կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության 234.12-րդ հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

<u>Դատական ծախսեր.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով պետական տուրքի գումարին, և նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքը, հայցը ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի գումարը պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Դատական այլ ծախսեր չկան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել.

Անվավեր ճանաչել պատասխանող ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից www.gnumner.am կայքում 25.05.2023թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ որոշումը, 07.06.2023թ. հրապարակված

պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ շտկված որոշումը, 13.06.2023թ. հրապարակված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ շտկված որոշումը:

Պատասխանող ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Շին նախագիծ» ՍՊԸ-ի բռնագանձել 90.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 14.07.2023թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը պահպանել՝ մինչև վճռի կատարումը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**

Ծանոթություն. Վճիռն օրինական ուժի մեջ է մտել՝ 15.12.2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱՋՄԱՆՅԱՆ**